նուում էր այդ դրամը, ցոյց չի տալիս՝ պատճառաբանելով իբր թէ կորցրել է։

Այսքան տեղեկութիւններ միայն կարողացանք կարճ ժամանակամիջոցում այդ բազմայիշատակ, երբեմն հայաշատ, կենտրոնից ձեռք բերել։ Կան ուշադրութեան արժանի ուրիշ հնութիւններ ևս, և գուցէ աւելի ևս գտնուին, եթէ աւելի ձեռնահաս մէկը նոցանով զբաղուի։ Օրինակ, Նար—Դար թուրքաբնակ գիւղում բացուել են աւազի տակից երեք սենեակներ, ուր արդեղուում է հայերի ազատ մուտքը։ Իսկ ինչպէս թրքերն են պատմում, այդ սենեակներից մէկում նստած է մի հերաձակ կին, զրկին բռնած մի երեխայ։ Գուցէ մի կուռք է այդ, ինչպէս և Բագուայ Ս. Աստուածածնայ եկեղեցու տեղում եղել է ծովի չաստուածուհու կռատունը, և այնտեղ գտնուած կուռքը մինչև այսօր էլ պահուում է եղբայր Միրզաբէկեանցների մօտ։

Dr. Տէր Յովհաննիսեանց.

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Տաճկահայերի համար, որոնք ռուսահայերի նման մեծագումար կտակներ անելու սովորած չեն դեռ, մխիթարական է այն լուրը, որ վերջերս Սամսունում վախճանած Յակոբ Կիւտիկեան անուն անձնաւորութիւնը, ինչպէս կարդում ենք «Սուրհանդակ»ում, 500 ոսկան ոսկի (4500 ր.) է նուիրել քաղաքի եկեղեցուն ու վարժարանին։ Հանգուցեալը բացի սոյն նուիրատուութիւնից մի մի գումար էլ թողել է Սամսունի Իսլամների իդական և Նիքսար գիւղաքաղաքի Հայ վարժարաններին։

—Կեռասիայի Ս. Կարապետ վանքում ձեռնարկել են մի նոր վարժարանի շինութեան։ Դպրոցը պէտք է կառուցուի 4000 քառ. կանգուն գետնի վերայ և ծախքը հաշուում են 1500 օսմ. ոսկի։ Այդ գումարի կէսն արդէն պատրաստ է, շնորհիւ մի քանի հա-

բուստ կեսարացիների առատաձեռնութեան. մնացած կէսի համար Կ. Պոլսի Ս. պատրիարքը յատուկ կոնդակ է արձակել, որով մայրաքաղաքի բարեսէր անձնաւորութիւններին հրաւիրում է նիւթապէս աջակցել սոյն բարենպատակ գործին:

—Գուցէ ո՛չ մի տեղ Հայ ուսուցիչների վիճակն այնքան ողբալի չէ, ինչքան Տաճկաստանի գաւառներում: Շաբին-Կարահիսարի դպրոցի հոգաբարձութիւնը այս տարի դպրոցի ծախքը ծածկել չի կարողանում: Պակասը լրացնելու համար նա պահանջում է ուսուցիչներից, որ իւրաքանչիւրը իր մէկ ու կէս ամսականը նուէր բերէ, այն ինչ խեղճ ուսուցիչների ռոճիկը հազիւ է գոհացում տալիս իրանց անհրաժեշտ կենսական պէտքերին: Ուսուցիչները մի բողոքագրով դիմել են Կ. Պոլսի Ուսումնական խորհրդին: Վերջինս որոշել է խնդրել Ս. պատրիարքից, որ բարեհաճի հարկ եղած յանձնարարութիւնն անել վիճակի գաւառական վարչութեան՝ նոյն ուսուցիչների իրաւունքներին ձեռնամուխ չլինելու համար:

—Մշոյ Պատր. փոխանորդ Խորոյ Ծ. վ. Բեհրիկեան Կ. Պոլսոյ Պրօնական ժողովին ուղարկել է Ս. Սահակ Պարթև Հայրապետի դամբարան-մատուռի վերաշինութեան մասին տեղեկութիւններ, յատակագծեր և մատուռի մանրանկարը՝ խնդրելով, որ հարկ եղած հրամանագիրն ուղարկեն իրան: Ժողովը որոշել է այդ մասին նախ կայսերական արտօնութիւն ստանալ և ապա ձեռնարկել գործի:

—Բայազէտի առաջնորդական տեղապահ նշանակուած է Էմմանուէլ վ. Պալեան: Իր պաշտօնատեղին մեկնելուց առաջ Սրբազան պատրիարքից Բերայի Ս. Երրորդութեան եկեղեցում նա ստացել է վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն: Պալեան վ. վերջերս կաթոլիկութիւնից վերադարձել էր իր մայրենի եկեղեցու գիրկը:

—Կ. Պոլսի ազգ. պատրիարքարանը հրամայել է Բիլէջիկի առաջնորդ Մովսէս եպիս. Գէօմրիւքչեանին, որ գնայ Ադանա՝ կաթողիկոսական նոր ընտրութեան հսկելու համար: Գէօմրիւքչեան որբապանն արդէն ուղևորուած է Ադանա:

—Արմաշի շրջանաւարտներից Տէր Սահակ վ. Օղաբաշեան, որ առաջնորդական փոխանորդի պաշտօնով մօտ 4–5 ամսից ի վեր գտնուում է Սեբաստիայում, աշխատում է մի ընծայարան բաց անել Ս. Նշանի վանքում: Ընծայարանը կունենայ 3–4 տարուայ ուսումնական շրջան և նպատակը կը լինի Սեբաստիայի թեմում գտնուած աղքատիկ գիւղերի համար պատրաստել գոնէ տարրական կրթութեան տէր քահանայ և վարժապետ:

—Սամսոնի Հայոց եկեղեցին թէ փոքր է և թէ շատ խարխուլ։ Առաջնորդ Տ. Յակոբ Աշոտ սրբազանի յորդորանքով՝ քաղաքի հայերը միահամուռ աջակցութեամբ ձեռնարկել են մի նոր եկեղեցու կառուցման։ Սամսոնցիների օրինակից քաջալերուելով՝ Տրապիզոնցիներն էլ ձեռնարկել են իրանց եկեղեցու վերաշինութեան։ Յունիսի 2-ին առաւօտեան տեղի է ունեցել հիմնադրութեան հանդէսը՝ նախագահութեամբ առաջնորդ Տ. Եղնիկ ծ. վարդապետ Բաբայեանի։

—Եդիպտոսում հաստատուած Վանեցի, Արաբկիրցի և Տաճկահայաստանի ուրիշ քաղաքներից գաղթած վաճառականներ ու սեղանաւորներ, որոնք սովոր են ամէն տարի իրանց մէջ դրամ հանդանակել և նիւթապէս օգնել իրանց ծննդավայր քաղաքներում բացուած որբանոցներին, այս տարի ևս այդ նպատակով 300 ոսկուց աւելի ուղարկել են Կ. Պոլսի պատրիարքարանին։ Բացի դրանից 40 ոսկի էլ դրել են պատրիարքարանի տրամադրութեան տակ՝ փափաք յայտնելով, որ այդ գումարը ընդունուի իբրև նպաստ միւս որբանոցների համար, որոնք գտնուում են պատրիարքարանի հոկողութեան ներքոյ։

—«Սուրհանդակի» մէջ կարդում ենք. «Վանայ առաջնորդական գործերուն նկատմամբ գրելու առթիւ դիտել տուած էինք, թէ Սահակ եպիս. հայրիւ իր վանահայրական գործերուն կրնայ հասնիլ, և թէ տեղապահական պաշտօնին մէջ օգնականի մը պէտք ունի։ Այս պէտքը կը շեշտուի Վանէն ստացուած նոր նամակներու մէջ, որոնք կիմացնեն, թէ Սահակ եպիս. պէտք է քիչ մը աւելի զբաղի իր վանահայրական պաշտօնով, որովհետև Լիմ անապատը դրամական նեղութեան մէջ կը գտնուի։ Տ. Սահակ եպիս.-ի յանձնարարութեամբ փոքրաւորներէն մէկը «Մեռելյարոյց» անուն աւետարանը Արճէշի և Ատճաւազի մէջ պատցնելով մեծ քանակութեամբ ցորեն էն. հաւաքեր է, բայց ցարդ մէջտեղ եկած չէ։ Նոյնպէս Սահակ եպիս. ազդեցիկ գիւղացիի մը ձեռք շրջաբերական մը տուած ըլլալով՝ հանդանակութեան հաներ է։ Յեշեալը բաւական տաւար և ոչխար հաւաքեր է, բայց ասոնք ալ մէջտեղ չկան։ Կ'երևայ որ այդ մարդերը վանահօր բարութենէն օգտուելով՝ հաւաքածնին իւրացնելու չափ ազատութիւն ունին։ Հիմայ լսուեր է, թէ վանքի մէկ քանի կտոր հին գորգեր և ուրիշ հնութիւն մը քաղաք բերուեր են ծախուելու և նեղութիւնները հոգալու համար։ Լսողներ ալ կան, որ արդէն ծախուած են 74 ոսկիի։ Կը վախցուի որ կարգը գայ վանքին հին ձեռագիրներուն և անոնք ալ անհետանան, ինչպէս անհետացան Մեծոփայ վանքի ձեռագիրները, որոնք թուով բաւական շատ էին։ Նիւթական

նեղութեան լսօք չունինք, սակայն պէտք է որ ժողովրդեան նուէրը իր նպատակին գործածուի: Այս ալ կրնայ ըլլալ, երբ Սահակ եպիս. ուղղակի ինք կատարէ այդ նպաստի հաւաքումը. բայց առաջնորդարանի գործերը այնքան կը զբաղեցնեն զինքը, որ անոնցմով պարապելու ատեն չըլլար. ուստի կարեւոր է որ այս կէտերը ուշադրութեան առնուին նոյն իսկ պատրիարքարանէն, քանի որ երկու գործերն ալ թերի պիտի մնան, և օր մը թերեւս վանքը խոշոր պարտք մըն ալ թողու»:

—«Ճարտարապետ Մելիտոսեան էֆ. ասկէ առաջ Խասգիւղի Գալֆայեան որբանոցի ամէն մասերը մանրամասնօրէն քննելով՝ անոր նորոգութեան կարօտ ըլլալը, ինչպէս նաև ըլլալիք ծախուց ենթադրական հաշիւները ներկայացուցած էր Ս. պատրիարքին: Ամերիկայէն Թավշանճեան Յովհաննէս էֆ. փափաք յայտնած ըլլալով այն նորոգութեան գործին մասնակցելու՝ թղթակցեր է Ս. պատրիարքի հետ և ըստ այնմ Ն. Սրբազնութեան տրամադրութեան տակ 50 ոսկի դրեր է, խնդրելով որ այդ գումարով մատուռն ու անոր յարակից պատը նորոգուի, և եթէ այդ գումարէն դրամ ալ աւելնայ, ատով որբուհիներուն սեղան մը տրուի: Սրբազան պատրիարքը օրհնութեան գիր մըն է գրեր Թավշանճեան էֆ.ին»:

—Տ. Մաղաքիա եպիս. Տէրունեան, որ Պարսկաստանի և Հնդկաստանի առաջնորդութիւնից վերադառնալով անցել էր արտասահման բժշկուելու, այժմ գտնւում է Իտալիայի Նէապօլ քաղաքում: Տ. Մաղաքիա եպիս. քիչ ժամանակից Պոլիս կը գնայ՝ ստանձնելու համար ինչ պաշտօն որ ցոյց տրուի իրան պատրիարքարանի կողմից:

—Դիարբէքիրում չքաւորութիւնն ու նեղութիւնը քանի գնում մեծ ծաւալ է ստանում. վերջերս պատրիարքարանից ուղարկուել է 30 ոսկի վիճակի առաջնորդ Եղիշէ վարդապետին՝ կարօտեալներին բաժանելու համար: Ինչ կարելի է անել սակայն 30 ոսկիով:

—Շապին - Կարահիսարի Կարաբօղազ գիւղի քահանան ու Թաղ. խորհուրդը՝ յայտնելով որ 40 տանից բաղկացած այդ գիւղը չունի ոչ եկեղեցի ոչ դպրոց, խնդրել են պատրիարքարանից, որ արտօնութիւն և նպաստ տրուի իրանց առ այժմ գոնէ մի եկեղեցի շինելու:

—Բալուի առաջնորդական փոխանորդ Սուրէն քահանայ պատրիարքարանից կրկին անգամ խնդրել է, որ առաջնորդական ընտրելիների մի ցանկ ուղարկուի, քանի որ Բալուի նման մի կարեւոր թեմ անհրաժեշտ է որ ունենայ իր համար վիճակա-

ւոր առաջնորդ: Սուրբէն քահանան յայտնում է միևնոյն ժամանակ, որ եթէ ընտրելիների ցանկը չշտապեցնեն, ինքն ստիպուած կը լինի հրաժարուել և միայն քահանայագործութեամբ զբաղուել: Պատրիարքարանը որոշել է ուղարկել այդ ցանկը:

—Տ. Գաբրիէլ վ· Անուշեան, որ երկար ժամանակ պաշտօնավարել է Երուսաղէմում և Կ· Պոլսում, վերջերս առաջնորդական պաշտօնով գնաց Բաղդադ: Անուշեան վարդապետն, ինչպէս հաղորդում են Կ· Պոլսի Հայ Թերթերը, մեծ ընդունելութիւն է գտել թէ՛ ժողովրդի կողմից և թէ տեղական թուրք կառավարութիւնից: Թղթակիցները յոյս են տածում, որ նորեկ առաջնորդի ջանքերի շնորհիւ տեղական Հայ դպրոցները կը բարեկարգուին շուտով:

—Կ· Պոլսի Ս· Փրկչեան Աղգային հիւանդանոցի հոգաբարձութիւնը ներկայ տարուայ մարտ 24-ին մի նուագահանդէս է տուել յիշեալ հաստատութեան օգտին: Զուտ արդիւնք ստացուել է 853 Օսմանեան ոսկի: Հիւանդանոցն այս տարի ունի 1000-ից աւելի պատսպարեալներ:

—Մի գաւառացի թղթակից «Սուրհանդակ»ի մէջ ցոյց է տալիս, որ Տաճկահայաստանի վանքերից դլխաւորներն, եթէ ուզեն, կարող են մի մի ժառանգաւորաց ուսումնարան պահել իրանց սեփական եկամուտներով, ինչպէս երբեմն Վարագայ վանքը պահում էր: Այդպիսով գաւառացի հայն էլ կունենայ ապագայում փոքր ի շատէ բանիմաց և բարեկիրթ հովիւներ, որոնք կարող են մոռացնել այն օտար միսիոնարներին, որոնց թիւն այնքան շատ է Տաճկաստանում: Թղթակիցը խորհուրդ է տալիս բաց անել այդպիսի դպրոցներ և, նրանց վերայ հսկելու իրաւունքը թողնելով թեմական առաջնորդներին՝ ղեկավարութիւնն յանձնել արմաշական վարդապետների:

—Գահիրէից գրում են, թէ Հայոց Բարեգործական ընկերութեան ղբօսարանի տնօրէնը՝ Արմենակ Գալուստեան՝ 200 ոսկի գողանալով անհետացել է:

—«Սուրհանդակ»ում կարդում ենք· «Աղգ· հիւանդանոցի մէջ շինուելիք մատուռի խնդիրը, ուրիշ աւելի կարևոր խնդիր մըն ալ երևան հանեց: Հիւանդանոցի վերաշինութեան համար ժամանակին կատարուած հանգանակութեան վերջնական կերպով ճշդուելուն խնդիրն է այդ, որուն կարևորութիւնը կը դգացնէ այսօր հոգաբարձութիւնը: 10-15 տարի առաջ նոյն նպատակով կատարուած հանգանակութեան ատեն՝ ժամանակին հոգաբարձութեան անդամները և ուրիշ բարեսէր անձեր դրամական նուէրներ ըրին· ասոնց մէջ պատկառելի դումարներ կան, ինչ-

պէս 3000 ոսկի, 2000 ոսկի, 1000 ոսկի, ևն, ևն. սակայն պայման չկար, որ ո և է յարկ մը, ո և է շէնք մը այս կամ այն նուիրատուին անուամբ շինուէր, այլ գործ մը կար մէջտեղը, ինչպէս հիւանդանոցի վերաշինութիւնը, իր զանազան մասերով, և պէտք էր գլուխ հանուէր: Այդպէս ալ եղաւ ու անձայն անշշուկ այդ գումարները ծախսուեցան ու նոր շէնքեր բարձրացան մեծ գումարներ ծախսուելով: Միքայէլ էֆ. Յակոբեան, որ այս գործին մէջ մեծապէս աշխատած է, իր մասնակցութեան բաժինը եղող 2000 ոսկիէն 500 ոսկին միայն այն ատեն ծախսած ըլլալով՝ մնացեալ 1500 ոսկին կը յատկացնէ մատուռին վերաշինութեան, պայմանաւ որ մատուռը արդի տեղէն տարբեր տեղ մը փոխադրուի և իր մարմինն ալ անոր մէջ ամփոփուի: Յակոբեան էֆ. հիւանդանոցին մէջ ամփոփուելու իրաւունքը ունի արդէն նոյն հաստատութեան համար իր ըրած նպաստներով և տարած ջանքերով. սակայն երբ իրեն հետ երկու երեք հազար ոսկի նուէր տուողներ և նոյն իսկ իր եղբայրը՝ բարեգործ և բարեհէր Յովհաննէս էֆ. Յակոբեան, 2000 ոսկի տալով հանդերձ՝ ո և է պայման չէ դրեր, այդ միւս նուիրատուներուն (որոնցմէ ոմանք ալ մեռած են) յարգանք մը ըլլալու համար, հարկ չտեսնուիր Միքայէլ էֆ. Յակոբեանի տուած նուէրը մասնաւոր ձևով և կերպով ցոյց տալու, այլ օրուան հիւանդանոցի հոգաբարձութեան պէտք տեսած և կարևոր դատած յարկին շինութեան յատկացնել. իսկ եթէ այդ ստակը ծախսուելէ յետոյ Միքայէլ էֆ. Յակոբեան դարձեալ 1000 ոսկի կը տրամադրէ մատուռ մը շինելու համար, այն ատեն խնդիրը կը փոխուի և ուրոյն կերպով կընայ նկատողութեան առնուիլ գործը: Արդի հոգաբարձութիւնը այս խնդրոյն վրայ երեք նամակ գրեց Ս. պատրիարքին, որ անձնական նամակներով պատասխանեց, փափագելով, որ պատրիարքարանը չխառնուի վերաշինութեան հաշիւներուն. սակայն հոգաբարձութիւնն ալ նկատելով որ խել մը խօսքեր կան, պէտք է վերջնականապէս ճշդուի թէ ստուգիւ մատրան շինութեան համար ծախսուելիք գումարը ժամանակին ստորագրուած 2000 ոսկի՞ն է, թէ նոր 1500 կամ 1000 ոսկիի նուէր մըն է. ասոնք հաշիւով, բացատրութիւնով կը հասկցուին, թերթի մը մէջ գրուած մէկ քանի թուանշաններ բաւական չեն հարկ եղած լուսաբանութիւնը տալու: Հոգաբարձութիւնը ասկէ զատ կրսէ նաև թէ նոր մատրան շինութեան ալ պէտք չի տեսներ, քանի որ ուրիշ կարևոր պէտքեր կան: Կարելի է 200 ոսկի ծախքով արդի մատուռը վերանորոգել և վերաշինութեան հանգանակութենէն տրամադրելի գումարը ուրիշ անհրաժեշտ եղած յարկերու շի-

նութեան յատկացնել: Նաև արդար և բանաւոր է այս յայտարարութիւնը և քանի որ հիւանդանոցի մատակարարութեան նման ծանր բեռ մը հոգաբարձութեան վրայ ծանրացած է, պէտք է կարևորութիւն տուլի նաև իր ներկայացուցած առաջարկներուն, մանաւանդ որ անոնք ստիպողական ձևով կը կրկնուին: Ամէն պարագայի մէջ օրէնքն ալ, տրամաբանութիւնն ալ կը պահանջեն, որ այս գործը վարչութեան սեղանին վրայ դրուի, և պաշտօնական կերպով նկատողութեան առնուի, ինչ որ կրսէ վարչութենէն ընտրուած հոգաբարձութիւն մը, որ շատ վստահելի տարրերէ կազմուած է, և անոր մէջ ալ կան անդամներ, որոնք ընտանեկան ու անձնական մեծ գումարներ նուիրած են այդ վերաշինութեան հանդանակութեան առթիւ»:

«ԷՐԷՐԵՏ»-Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ·

Տարուայ սկզբին «Արարատ»ի համար կազմած խմբագրութիւնը մարտ-ապրիլ տետրակը հրատարակելուց յետոյ հրաժարուեց, եւ յունիս 16-ին մենք հրաման ստացանք ժամանակաւորապէս առաջ տանելու խմբագրութեան գործը, մինչեւ որ հաստատուն խմբագիր կնշանակուի: Պաշտօնական թերթի համար խմբագրութեան փոփոխուիլն այն նշանակութիւնը չունի, ինչ որ մասնաւոր թերթի համար· այստեղ մի պաշտօնական մարմին, մի հաստատութիւն կայ, որ հսկում է թերթի վերայ եւ ուղղութիւն տալիս նորանխմբագրութիւնը հաստատութեան ժամանակաւոր ներկայացուցիչն է միայն, որ առաջնորդուում է տրուած ուղղութեամբ եւ ցուցումներով, եւ քանի հաստատութիւնը նոյնն է մնում, կարող է ներկայացուցիչը փոխուել, իսկ թերթը պահել իւր ուղղութիւնն ու շարունակել անսայթաք իւր ընթացքը: Սակայն մեզանում՝ սովոր լինելով ամէն ինչ անձի հետ կապելու՝ առանձին ուշադրութեան արժանի զուտ վերջին փոփոխութիւնները· ոչ ոքին չհետաքրքրող ու չկարդալու